https://doi.org/10.46991/S&L/2022.92.095

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՀԱՅՑԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մերի Խաչատրյան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Հայցի նախնական ապահովումը ՀՀ իրավական համակարգում համեմատաբար նոր և դեռևս սահմանափակ կիրառելի ինստիտուտներից է: Հայցի նախնական ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանելու անձի գույքային կամ ոչ գույքային շահերը, որոնք կարող են իրացվել՝ հետագայում վերջինիս կողմից հարուցվելիք հայցը բավարարելով: Որպես իրավունքի պաշտպանության նախնական ձևեր՝ հայցի նախնական ապահովման միջոցները ուղղված են հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու դիմում ներկայացրած անձի շահերի ապահովմանը:

Հայցի նախնական ապահովման և հայցի ապահովման ինստիտուտների հարաբերակցության համատեքստում հարկ ենք համարում նշել, որ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառմանը որոշակիորեն բնորոշ են այն չափանիշները, որոնք օրենսդիրը սահմանել է արդեն հարուցված քաղաքացիական գործի քննության շրջանակներում հայցի ապահովման միջոց կիրառելու համար, քանի որ երկու ինստիտուտների նպատակն էլ ընդհանուր առմամբ դատական ակտի կատարման երաշխիքներն ապահովելն է:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի[1] (այսուհետ՝ Օրենսգիրք) 137-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումն իրականացվում է «Հայցի ապահովումը» վերտառությամբ 13-րդ) գլխով սահմանված կանոններով՝ սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները հաշվի առնելով:

Այսինքն՝ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման կարգը և պայմանները կարգավորվում են հայցի ապահովման ինստիտուտի նկատմամբ կիրառելի դրույթներով՝ տվյալ ինստիտուտի կարգավորման առանձնահատկությունների հիման վրա:

Վերը նշված իրավադրույթի ուսումնասիրությունից հետևում է, որ նախնական ապահովման ինստիտուտի առանձնահատկությունները դրսևորվում են այն հարցերում, որոնք վերաբերում են տվյալ պահին հայցադիմումի ներկայացման անհնարինության հիմնավորմանը, հայցի հարուցման ժամկետներին և պատասխանողին պատճառված հնարավոր վնասները կանխելու երաշխիքներին: Այնուամենայնիվ, հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման հարցը դատարանը քննարկում է մինչև հայցի հարուցումը: Ուստի նշված միջոցները քաղաքացիական դատավարությունում մինչդատական բնույթ ունեն և չեն նույնանում հայցի ապահով-

[1] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09. 02. 2018թ.: Տե՛ս, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374):

ման հետ, թեև կիրառված նախնական ապահովման միջոցները սահմանված ժամկետում հայցադիմում ներկայացվելու դեպքում իրավունքի ուժով գործում են որպես հայցի ապահովման միջոցներ:

Մինչդատական փուլում հայցի նախնական ապահովման միջոցի կիրառման նպատակը ոչ միայն միջնորդավորված կերպով հանգում է հայցի բավարարման դեպքում դատական ակտի կատարման ապահովմանը, այլ նաև դեռևս հայց հարուցված չլինելու պայմաններում հնարավոր այն ռիսկերի կանխմանը, որոնք կարող են խոչընդոտել շահագրգիռ անձի կողմից իր պահանջի իրավունքի իրացումը: Այլ կերպ՝ դեռևս հայց ներկայացված չլինելու պարագայում հայցի նախնական ապահովման միջոցները կիրառվում են՝ հայցի իրավունքի անարգել իրականացումը և նյութաիրավական պահանջի ներկայացման հնարավորությունը ապահովելու համար, իսկ կիրառումը միտված է պահպանելու այն վիճակը, որը անհրաժեշտ է դատարանում վեճը լուծելու ժամանակ:

Հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը առավել առանցքային նշանակություն ունի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում: Ապօրինի ծագում ունեցող ակտիվների բռնագանձման երաշխիքներից է նման ակտիվների հայտնաբերման և սառեցման գործուն կառուցակարգերի ներդրումը, որի անհրաժեշտության մասին նշվում է միջազգային մի շարք փաստաթղթերում[1]:

Թիրախային բռնագանձման արդյունավետության համար կարևորվում է այնպիսի կանխարգելիչ միջոցների կիրառումը, ինչպիսիք են ակտիվների ժամանակավոր սառեցումը, անձի բանկային հաշիվների մոնիտորինգը և վերահսկումը[2]: Միջազգային պրակտիկայում ակտիվների սառեցումը ունի հետևյալ դրսևորումները. 1) անշարժ գույքի օգտագործման և տնօրինման արգելումը և կիրառված արգելանքի գրանցումը գույքի գրանցման ռեգիստրում, 2) դրամական միջոցների փոխանցումների հետ կապված գործարքները ժամանակավոր կասեցնելու մասին բանկին կարգադրություն տալը, 3) պայմանագրային պարտավորությունից բխող պահանջի տնօրինումը արգելելը, 4) ընկերության բաժնետոմսերի կամ բաժնեմասերի օտարման արգելքը և արգելքի գրանցումը ռեեստրում, 5) ընկերության բաժնետոմսերից կամ բաժնեմասերից կամ այլ արժեթղթերից բխող իրավունքների իրացումը կամ տնօրինումը արգելելը:

Կարևորելով ներգործության նշված միջոցների առաքելությունը՝ պետություններին խրախուսվում է առանց մեղադրական դատավճռի օրենսդրությունում գույքի բռնագանձման այնպիսի կարգավորումների նախատեսումը, որոնք թույլ են տալիս առանց կողմին ծանուցելու (ex parte) հավաքել ֆինանսական կամ այլ բնույթի ապացույցներ կամ կիրառել ակտիվների սառեցում[3]: Նման կառուցակարգերի բացակայության պայմաններում մեծանում է ակտիվների կորստի և դրանց վերահսկողությունից դուրս մնալու հավանականությունը:

Ոլորտը կարգավորող միջազգային բոլոր հիմնական կոնվենցիաները[4] այն վավերացրած պետություններին պարտավորեցնում են այնպիսի միջոցներ ձեռնար-

---

[1] Տե՛ս Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 2003թ. հոկտեմբերի 31, Հոդված 54: «Stolen Asset Recovery: A Good Practices Guide for Non Conviction Based Asset Forfeiture» ուղեցույց, էջ 9: Եվրոպական միության դիրեկտիվը 2014/42/EU of The European Parliament and of The Council of 3 April 2014 on the freezing and confiscation of instrumentalities and proceeds of crime in the European Union, Հոդված 3:

[2] Տե՛ս Stolen Asset Recovery: A Good Practices Guide, էջ 55.

[3] Տե՛ս Commonwealth Model Legislation, բաժին 3(2) (CD-ROM appendix F).

[4] Տե՛ս UNTOC, UNCAC, the 1990 Strasbourg Convention, the 1999 Strasbourg Convention and the Warsaw Convention

կել, որոնք թույլ են տալիս սառեցնել ակտիվները և ապահովել ուսումնասիրության իրականացման բնականոն ընթացքը: Նշված դրույթները հետագայում ամրագրվել են Եվրոպական Միության 2014 թվականին ընդունած դիրեկտիվում[1], սահմանվել են այն երաշխիքները, որոնց շնորհիվ ապահովվում է, որ գույքի արգելադրման որոշումը ուժի մեջ չմնա ավելի երկար, քան անհրաժեշտ է, և նախատեսվում է արգելադրված գույքի վերադարձը գույքի օրինական սեփականատիրոջը այն դեպքում, երբ այդ գույքի բռնագանձման հնարավորությունը չի հաստատվել:

Հատկանշական է, որ ի տարբերություն քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող վեճերի դատական կարգով քննությանը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը չի մեկնարկում դատարան հայցադիմում ներկայացնելով, այլ ընդգրկում է նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ամբողջ ժամանակահատվածը, որի արդյունքներով կազմված եզրակացության հիման վրա հարուցվում է քաղաքացիական բռնագանձման հայց: Հարկ ենք համարում ընդգծել, որ գույքի բռնագանձման հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրությունը՝ որպես վարույթ իրականացման պարտադիր ընթացակարգ, առաջին հերթին ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության և դրա ծավալների բացահայտմանը:

Իրավասու մարմինը[2] «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով[3] (այսուհետ՝ Օրենք) իրեն վերապահված լիազորությունների սահմանում պարզում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջ ներկայացնելու համար անհրաժեշտ հիմքերի առկայությունը, այդ թվում՝ անձին պատկանող այն գույքի մասին տվյալները, որի ձեռքբերման և անձի օրինական եկամուտների միջև առկա է էական անհամապատասխանություն: Ձեռնարկված գործողությունների նախնական արդյունքներն ամփոփվում են ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ամփոփագրով, որով, ըստ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, որոշվում է կա՛մ դադարեցնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, կա՛մ ձեռնարկել միջոցներ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու ուղղությամբ: Այսինքն՝ ուսումնասիրության արդյունքներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի հայտնաբերումը ինքնին հիմք է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու համար, որոնց թվին է դասվում գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման դիմում ներկայացնելը:

Այսպես, Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ուսումնասիրության նախնական արդյունքներով ամփոփագիրը կազմելուց հետո իրավասու մարմինը կարող է առաջին ատյանի դատարան ներկայացնել հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դիմում, որը քննվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումների քննության կարգով՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները հաշվի առնելով:

Վերոնշյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ նախքան գույքի բռնագանձ-

---

[1] Մանրամասն տե՛ս, DIRECTIVE 2014/42/EU OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 3 April 2014 on the freezing and confiscation of instrumentalities and proceeds of crime in the European Union, Հոդված 4, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0042&from=EN

[2] «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանումն է:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին», ընդունվել է 16.04.2020թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2020.05.13/50(1605):

ման պահանջ դատարան ներկայացնելը իրավասու մարմինը ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տվյալների հիման վրա կարող է դատարան ներկայացնել ենթադրյալ ապօրինի գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դիմում, որի քննության նկատմամբ կիրառվում են հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը կարգավորող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները՝ հաշվի առնելով Օրենքով սահմանված հատուկ կանոնները:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանձնահատկությունը համադրելի է վարույթի հետապնդած նպատակների հետ, որը հանգում է մինչև գույքի բռնագանձման հարցի լուծումը ուսումնասիրությամբ հայտնաբերված գույքի իրավական և փաստական վիճակի պահպանմանը, ուսումնասիրության բնականոն ընթացքի և արդյունքների ամփոփման ապահովմանը: Իրավասու մարմնի նախաձեռնած ուսումնասիրության ընթացքում ակտիվների սառեցումը ժամանակավորապես կանխում է այդ ակտիվների օտարման կամ դրանց արժեքի էական նվազմանն ուղղված գործարքների կնքումը: Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքը կարող է փոփոխության ենթարկվել ուսումնասիրության ժամանակահատվածում՝ զրկելով իրավասու մարմնին գույքի ծագման աղբյուրի օրինականությունը պարզելու, գույքի օգտագործման արդյունքում ստացվածը հայտնաբերելու օբյեկտիվ հնարավորությունից: Ուստի տվյալ վարույթում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը դրսևորվում է անձի փաստացի իրավազորության ներքո գտնվող գույքի նկատմամբ որոշակի գործողությունների կատարումը ժամանակավորապես սահմանափակելով, որի չձեռնարկումը կարող է դժվարացնել կամ անհնարին դարձնել գույքի բռնագանձման պահանջի ներկայացումը և բացասաբար ազդել ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփման վրա:

Վերոնշյալ վերլուծությունների համատեքստում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում հայցի նախնական ապահովման միջոցները կարող ենք բնորոշել որպես **նախապես ձեռնարկված նյութաիրավական ներգործության այնպիսի ժամանակավոր միջոցներ, որոնք սահմանափակում են անձի կողմից իր փաստացի իրավազորության ներքո գտնվող գույքի տիրապետումը, օգտագործումն ու տնօրինումը, ուղղված են իրավասու մարմնի կողմից ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի պահպանմանը և ապահովում են գույքի բռնագանձման պահանջի ներկայացումը դատարան:**

Օրենքը սահմանում է հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավասու մարմնի իրավունքը, ըստ որի՝ վերջինս ուսումնասիրության նախնական արդյունքներով ամփոփագիրը կազմելուց հետո կարող է համապատասխան դիմում ներկայացնել դատարան: Հաշվի առնելով վարույթի սուբյեկտային կազմը և վարույթի նախաձեռնման հիմքում առկա հանրային շահը՝ պայմանավորված կոռուպցիայի և հանցավորության դեմ պայքարով, ինչպես նաև նման գործունեությունից ստացված ակտիվները շրջանառությունից հանելով, գտնում ենք, որ իրավասու մարմնին Օրենքով վերապահված հայեցողությունը սահմանափակված է իրավաչափ գործելու պայմանով և պետության անունից ստանձնած պոզիտիվ պարտականությամբ: *Իրավասու մարմինը պարտավոր է նախնական ապահովման միջոցների կիրառման պահանջով դիմել դատարան այն դեպքում, երբ ուսումնասիրության ընթացքում ողջամիտ կասկածներ կան գույքի ապօրինի ծագում ունենալու վերաբերյալ, և գույքի նկատմամբ նախնական ապա-*

հովման միջոցներ չձեռնարկելը կարող է հանգեցնել գույքի կորստի կամ արժեքի փոփոխության՝ խոչընդոտելով ուսումնասիրության իրականացումը և քաղաքացիական բռնագանձման հայցի ներկայացումը:

Իրավասու մարմինը ձեռնարկում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ Օրենքով սահմանված միջոցներ, այդ թվում՝ նախնական ապահովման միջոցներ, եթե առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որի արժեքն ուսումնասիրության տվյալներով գերազանցում է Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված շեմը, ըստ որի՝ գույքի շուկայական արժեքը հայցի ներկայացման պահին պետք է գերազանցի 50 միլիոն ՀՀ դրամը: Այսինքն՝ դատարան ներկայացվելիք հայցի առարկան հայցի ներկայացման պահին 50 միլիոն ՀՀ դրամը գերազանցող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջն է: Հետևաբար գտնում ենք, որ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման պահանջ կարող է ներկայացվել այն գույքի կապակցությամբ, որը արժեքային արտահայտությամբ գերազանցում է 50 միլիոն ՀՀ դրամը: Հակառակ դեպքում նախնական ապահովումը ուղղված չի լինի ներկայացվելիք հայցով անձի պահանջի իրավունքի իրացմանը, քանի որ հայցադիմումի բավարարումը անմիջականորեն կախված է նաև գույքի արժեքի՝ Օրենքով սահմանված շեմից:

Գործող կարգավորումների պայմաններում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման դիմում ներկայացնելու համար սահմանված ընդհանուր նախապայմաններն են տվյալ պահին հայցադիմում ներկայացնելու անհնարինությունը և դատարանի դեպոզիտ սահմանված չափով պարտապանի հնարավոր վնասների հատուցումն ապահովող գումարի վճարումը, իսկ նշված նախապայմանների բացակայության դեպքում դատարանը պարտավոր է վերադարձնել դիմումը:

Ի տարբերություն Օրենսգրքով նախատեսված՝ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառելու մասին դիմումին ներկայացվող պահանջների՝ իրավասու մարմնից չի պահանջվում հիմնավորել տվյալ պահին հայցադիմում ներկայացնելու անհնարինությունը: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ նախքան հայցադիմում ներկայացնելը նախնական ապահովման բոլոր անհրաժեշտ միջոցները կիրառելուց հետո իրավասու մարմինը պարտավոր է կատարել որոշ գործողություններ, որոնք ուղղված են շահագրգիռ անձանց ծանուցման իրավունքի ապահովմանը և ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփմանը: Շահագրգիռ անձանց ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա իրավասու մարմինը կազմում է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություն և քննարկում հաշտության համաձայնության հիման վրա ուսումնասիրությունը ավարտելու հնարավորությունը: Այսինքն՝ նշված գործողությունները կատարելուց հետո միայն իրավասու մարմինը կարող է նախաձեռնել դատարան հայցադիմում ներկայացնելը, ուստի տվյալ պահին հայցադիմում ներկայացնելու անհնարինությունը պայմանավորված է Օրենքով սահմանված ուսումնասիրության ընթացակարգի պահպանմամբ և հավելյալ հիմնավորում չի պահանջում:

Հատկանշական է, որ հայցադիմում ներկայացնելու անհնարինությունը ապացուցելու և դատարանի դեպոզիտ գումար վճարելու պարտականությունից ազատված լինելու պարագայում իրավասու մարմնի ներկայացրած նախնական ապահովման միջոցների կիրառման դիմումը վերադարձնելու այլ հիմքեր նախատեսված չեն: Այնինչ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առանձնահատկություններով պայմանավորված, գործում են նախնական ապահովման միջոցներ կիրառելու պահանջ ներկայացնելու իրավաչափության տարբերակված պայմաններ: Այդ պայմաններն են՝ Օրենքով սահմանված հիմքերի հիման վրա իրա-

վասու մարմնի կողմից ուսումնասիրության նախաձեռնումը, գույքի բռնագանձման պահանջի ներկայացման համար անհրաժեշտ հիմքերի առկայությունը պարզելու համար ապացույցներ հավաքելը և ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի հայտնաբերումը, ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումը և ամփոփագրի կազմումը, արժեքային արտահայտությամբ 50 մլն ՀՀ դրամը գերազանցող ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի հարուցման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու որոշում կայացնելը: *Հիմք ընդունելով նշվածը՝ գտնում ենք, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու պահանջ ներկայացնելու վերոգրյալ պայմանները չպահպանելու դեպքում իրավասու մարմնի մոտ չի ծագում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման դիմում ներկայացնելու իրավունքը, ուստի առաջարկում ենք, որ դատարանը իրավասու լինի, առանց դիմումը ըստ էության քննարկելու, կայացնել դիմումը վերադարձնելու վերաբերյալ որոշում այն դեպքում, երբ չեն պահպանվել հայցի նախնական ապահովման միջոցների կիրառում պահանջելու՝ Օրենքով սահմանված նախապայմանները:*

Հատկանշական է, որ Օրենսգրքի 137-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ դիմողի կողմից սահմանված ժամկետում հայցադիմում ներկայացվելու դեպքում կիրառված հայցի նախնական ապահովման միջոցները գործում են որպես հայցի ապահովման միջոցներ:

Նշված կարգավորումից հետևում է, որ հայցադիմումը ներկայացնելու և հայցադիմումը վարույթ ընդունելու դեպքում մինչդատական փուլում կիրառված նախնական ապահովման միջոցները իրավունքի ուժով փոխակերպվում են հայցի ապահովման միջոցների, որը վերաբերելի է նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությանը: Հարկ ենք համարում ընդգծել, որ տվյալ դեպքում ոչ թե հայցի ապահովման միջոցը փոխարինվում է մեկ այլով, այլ նախնական ապահովման գործող միջոցը շարունակում է գործել որպես հայցի ապահովման միջոց:

Հաշվի առնելով հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու դիմումի մինչդատական բնույթը՝ օրենսդիրը զուգահեռաբար երաշխիքներ է սահմանել ինչպես դիմողի, այնպես էլ հայցի նախնական ապահովմամբ պարտապանի իրավունքների պաշտպանության համար: Պարտապանի իրավունքների պաշտպանության երաշխիքներից են հնարավոր վնասների հատուցումն ապահովող գումարը դատարանի դեպոզիտ վճարելու՝ հայցվորի պարտականությունը և հակընդդեմ ապահովումը:

Ուշագրավ է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում գույքի նկատմամբ նախնական ապահովման միջոցների կիրառման դեպքում հայցվորը ազատված է հնարավոր վնասների հատուցումն ապահովող գումարը դատարանի դեպոզիտ վճարելու պարտականությունից: Ավելին, Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դիմողի առնչությամբ չեն կարող կիրառվել հակընդդեմ ապահովման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը:

Փաստորեն, հայցի նախնական ապահովմանը հակակշռող երաշխիքները խնդրո առարկա վարույթում չեն գործում: Այս կարգավորման հիմքում դրված է այն տրամաբանությունը, որ իրավասու մարմինը հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման պահանջով դիմում է դատարան արդեն իսկ կատարված ուսումնասիրության արդյունքների և գույքի ապօրինի ծագման ողջամիտ կասկածի հիման վրա: Այսինքն՝ իրավասու մարմինը պետության անունից նախաձեռնում է Օ-

րենքով հստակ կանոնակարգված գործընթաց, որի նպատակը ապօրինի ձեռք բերված ակտիվների հայտնաբերումն ու բռնագանձումն է: Պետությունը, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունի հանրային շահից ելնելով վերահսկել գույքի օգտագործումը՝ ընդունված օրենքների կիրառման անհրաժեշտության պարագայում, պայմանով որ անձի՝ գույքից անարգել օգտվելու միջամտությունը համաչափ լինի հետապնդած նպատակին և անհարկի չսահմանափակի անձի իրավունքները: Ուստի նշված երաշխիքների կիրառման սահմանափակումը պայմանավորված է իրավասու մարմնի կողմից Օրենքով սահմանված հիմքերի հիման վրա համապատասխան միջոցներ ձեռնարկելու պարտականությամբ: Ուսումնասիրության ընթացքում անձը ծանուցվում է հարուցված ուսումնասիրության և նախնական ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ նախնական ապահովման միջոցներ կիրառվելուց հետո և զրկված չէ համապատասխան հիմքերի առկայության դեպքում դատարանին հայցի նախնական ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավունքից:

Ինչ վերաբերում է հայցի իրավունքի և հայցից պաշտպանվելու իրավունքի իրավահավասարության և այդ իրավունքների պաշտպանության հավասարակշռության սկզբունքներին, ապա կարծում ենք, որ հակընդդեմ ապահովում պահանջելու իրավունքի սահմանափակումը կիրառելի է միայն հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու դիմումի առնչությամբ: Նշվածը հիմք է տալիս փաստելու, որ Օրենքով հակընդդեմ ապահովման տարբերակված կանոններ նախատեսված չեն, ուստի կիրառելի են Օրենսգրքի՝ հակընդդեմ ապահովումը կարգավորող դրույթները: Ավելին, կիրառված հայցի նախնական ապահովման միջոցները հայցադիմում ներկայացնելուց հետո գործում են որպես հայցի ապահովման միջոցներ, ուստի անձի դեմ այդպիսի միջոց կիրառվելու կամ արդեն կիրառված նախնական ապահովման միջոցը որպես հայցի ապահովման միջոց գործելու դեպքում անձը կարող է իր հնարավոր վնասների հատուցման համար հակընդդեմ ապահովում պահանջելու միջնորդություն ներկայացնել: Հակընդդեմ ապահովումը՝ որպես օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի մասնավոր դրսևորում, նպատակ է հետապնդում հավասարակշռել դատավարության մասնակիցների շահերը և իրավունքներից օգտվելու հավասար հնարավորությունը[1]: Իհարկե ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը, ի տարբերություն քաղաքացիաիրավական այլ վեճերից բխող պահանջների, ուղղված է դատարանին գույքի ապօրինի ծագումը հաստատվելու դեպքում գույքի իրավական կարգավիճակի որոշմանը և ինքնին չի բովանդակում նյութաիրավական վեճ, սակայն գույքի բռնագանձման պահանջը քննվում է քաղաքացիական դատավարության կարգով, հետևաբար այն անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, պետք է լրիվ ծավալով օգտվի պաշտպանության միջոցներից, եթե ներկայացվել են հնարավոր վնասների վերաբերյալ փաստարկներ և դրանք հիմնավորող ապացույցներ:

Հատկանշական է, որ տվյալ վարույթով որպես իրավասու մարմին, իսկ հետագայում նաև որպես հայցվոր պետության անունից հանդես է գալիս ՀՀ գլխավոր դատախազությունը՝ պետական շահերի պաշտպանության սահմանադրական գործառույթների շրջանակներում, սակայն ՀՀ գլխավոր դատախազությունը վարույթում հանդես է գալիս ոչ թե նյութաիրավական վեճի կողմ, այլ դատավարական կողմ: Այնուամենայնիվ, պետության անունից հանդես եկող իրավասու մարմնի կողմից ձեռ-

[1] Տե՛ս թիվ ԵԴ/17072/02/20 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի 03.11.2020թ. որոշումը

նարկված ուսումնասիրությունների և շահագրգիռ անձի գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումների պարագայում հայցվող բռնագանձման պահանջի մերժումը կարող է հանգեցնել դրա հետևանքով անձին պատճառված վնասի հատուցման պետության պարտականությանը:

Միջազգային դատական պրակտիկան ընթանում է այն ճանապարհով, որ, ի տարբերություն ակտիվների վերջնական բռնագանձման, նախնական ապահովումը դիտարկվում է որպես ժամանակավոր միջոց, ուստի պահանջում է ապացուցման ավելի ցածր չափանիշ, քան բռնագանձման համար[1]:

Հարկ ենք համարում ընդգծել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածը, որի հիման վրա մեկնարկել է ուսումնասիրությունը, ինչպես նաև հայցի հարուցման վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ որոշման կայացումը ինքնին բավարար չեն նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումը բավարարելու համար: Իրավասու մարմինը պարտավոր է վկայակոչել հայցի նախնական ապահովման որոշակի հիմքեր և պատճառաբանել ապահովման այս կամ այն միջոցի կիրառման անհրաժեշտությունը, իսկ դատարանը, ստուգելով վկայակոչված հիմքերի առկայությունը, պարտավոր է իրավական գնահատական տալ ուսումնասիրության նախնական արդյունքներին այն ծավալով, որը իրատեսական է դարձնում տվյալ գույքը ապօրինի ծագում ունենալու հիմքով հետագայում բռնագանձելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Raimondo v Italy գործով[2] նշել է, որ նախնական ապահովման միջոցների կիրառման դեպքում ևս անհրաժեշտ է հաշվի առնել միջոցների կիրառման համաչափությունը հետապնդած նպատակին, ինչպես և գույքի բռնագանձման դեպքում, սակայն այդ միջոցների կանխարգելիչ և ժամանակավոր բնույթը ավելի հավանական է դարձնում հանրային շահով պայմանավորված դրանց համաչափ լինելու ընկալումը: Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է այն դիրքորոշումը, որ ակտիվների սառեցումը միջամտում է անձի սեփականության իրավունքի անարգել իրականացումը, սակայն այն համատեղելի է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով[3] (այսուհետ՝ Կոնվենցիա) ապահովվող երաշխիքների հետ, քանի որ օրենքով սահմանված ներգործության միջոցների կիրառումը պայմանավորված է հանրային շահով[4]:

Մինչդեռ կարծում ենք, որ գույքի նկատմամբ նախնական ապահովման միջոցների կիրառումը միայն հանրային շահի առկայությամբ պայմանավորելը կարող է խախտել մյուս կողմի՝ իրեն պատկանող միջոցները ազատորեն տնօրինելու իրավունքը և անհամաչափ վնաս պատճառել վերջինիս շահերին, ուստի ընտրված ներգործության միջոցները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակի և անձի՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ապահովման միջոցների հետ:

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյուն-

[1] Տե՛ս Maugeri, La riforma delle sanzioni patrimoniali, 155-րդ կետ:
[2] Տե՛ս Raimondo v Italy 12954/87, 22. 02. 1994, Arcuri v Italy 52024/99, 05. 07. 2001:
[3] Ընդունվել է 4-ը նոյեմբերի 1950 թ., Հռոմ, ՀՀՊՏ 2002.06.05/17(192), հոդ. 367:
[4] Տե՛ս ECtHR, Riela et autres c. Italie, 04. 09. 2001, appl. no. 52439/99:

քում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից[1]:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման դիմումի ըստ էության քննության շրջանակներում դատարանը պետք է պարտադիր դատողություններ անի հետևյալ հարցերի վերաբերյալ. արդյո՞ք ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ ողջամիտ կասկածը իրատեսական է դարձնում հետագայում գույքի բռնագանձման պահանջի բավարարումը, արդյո՞ք նախնական ապահովման միջոցներ չձեռնարկելու դեպքում առկա է գույքի օտարման կամ գույքի արժեքի էական փոփոխության հնարավորություն, և այդ փոփոխությունը կարո՞ղ է արդյոք դժվարացնել ուսումնասիրության արդյունավետ իրականացումը և այդ արդյունքների հիման վրա բռնագանձման պահանջի ներկայացումը, արդյո՞ք կիրառվելիք միջոցները համաչափ են անձի իրավունքների սահմանափակմանը և դրանով հետապնդվող նպատակին:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոցը կիրառվում է ուսումնասիրության նախնական արդյունքների հիման վրա, որոնք կարող են փոփոխվել հետագա ուսումնասիրության ընթացքում շահագրգիռ անձանց կողմից տրամադրված նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա: Ավելին, ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփմամբ կարող է անգամ հերքվել ակտիվների կամ դրա մի մասի ապօրինի ծագման փաստը: Նշվածից հետևում է, որ դատարանի որոշմամբ կիրառված նախնական ապահովման միջոցների հիման վրա արգելադրված գույքի ծավալը ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփմամբ կարող է փոփոխվել, իսկ փոխված լինելու պարագայում իրավունքի ուժով նախնական ապահովման միջոցները հայցադիմում ներկայացնելու դեպքում նույն ծավալով որպես հայցի ապահովման միջոցներ գործելու դեպքում կարող է հանգեցնել հայցի ապահովման համաչափության սկզբունքի խախտման, որը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում համարժեքություն ապահովվի կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող նպատակի միջև՝ համարժեք արձագանքելով որևէ իրավիճակի[2]: Նշված սկզբունքը ամրագրված է Օրենսգրքի 129-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ հայցի ապահովման միջոցը պետք է համաչափ լինի ներկայացված պահանջին և հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին, ինչը կիրառելի է նաև հայցի նախնական ապահովման նկատմամբ: *Ուստի, հաշվի առնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առանձնահատկությունները և դիտարկելով այն հայցի ապահովման համաչափության սկզբունքի համատեքստում՝ առաջարկում ենք, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմում ներկայացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ դատարանը քննարկի նաև հայցի նախնական ապահովման միջոցը հայցի ապահովման միջոցով փոխարինելու հարցը՝ հաշվի առնելով նախնական ապահովման կիրառված միջոցների և հայցապահանջի համաչափությունը, անհրաժեշտության դեպքում ձևափոխելով այն:*

Օրենսդիրը, հաշվի առնելով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի առանձնահատկությունները, նախատեսել է հայցի ապահովում կիրառված լինելու

---

[1] Տե՛ս Former king of Greece and others v Greece գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-րդ վճիռը, կետ 89, Սկոլլոն ընդդեմ Իտալիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1995 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը, կետ 32:

[2] Տե՛ս թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.11.2015թ. որոշումը:

պայմաններում գույքի կառավարման և պահպանման հնարավորությունը: Այսպես, Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բացառիկ դեպքերում, գործի քննության առանձնահատկություններից ելնելով, դատարանը, կիրառելով հայցի ապահովում, որոշում է կայացնում գույքը հանձնել պետության տիրապետությանը, ապա տվյալ գույքի կառավարումը և պահպանումն իրականացնում է պետությունը: Նման բացառիկ հանգամանքներ Օրենքով դիտվել են պահպանման չհանձնելու դեպքում՝ գույքի արժեքի էականորեն նվազման հավանականությունը կամ գույքը պատասխանողի մոտ թողնելու դեպքում՝ գույքի հետագա բռնագանձման անհնարինությունը և այլն: Փաստորեն, գույքի կառավարման հնարավորությունը գործում է կիրառված հայցի ապահովման շրջանակներում, մինչդեռ հայցի նախնական ապահովման դեպքում նշված երաշխիքները չեն գործում: Եթե համեմատենք հայց ներկայացնելու Օրենսգրքով սահմանված ընդհանուր ժամկետի հետ, որը բավական սեղմ է, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դեպքում հայցադիմում ներկայացնելու ժամկետը վեց ամիս է, ավելին՝ նշված ժամկետը կասեցվում է ուսումնասիրության ընթացքը իրավասու մարմնի կողմից դադարեցնելու դեպքում, այսինքն՝ ստացվում է, որ հայցադիմում ներկայացված չլինելու պարագայում անձի գույքը արգելանքի տակ է գտնվում բավական տևական ժամանակ, որոշ դեպքերում՝ անորոշ ժամկետով: Որպես հետևանք կարող է առաջանալ գույքը պահպանման չհանձնելու դեպքում գույքի արժեքի էական նվազման հավանականություն, նամանավանդ եթե նախնական ապահովումը կապված է տնտեսական ընկերության կառավարման (բաժնետոմսերի կամ բաժնեմասի տնօրինման) հետ, ապա կարող է էական վնաս հասցվել ընկերությանը կամ էական խոչընդոտներ ստեղծել վերջինիս գործունեության համար: Մասնավորապես՝ ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունքի սահմանափակումները, ինչպես նաև ընկերության կողմից վերջինիս բնականոն գործունեությանն ուղղված գործարքների կնքման սահմանափակումները կարող են ծանր հետևանքներ առաջացնել ընկերության համար, ընդհուպ հանգեցնել ընկերության գործունեության փաստացի անհնարինության: Մյուս կողմից հակընդդեմ ապահովման և հնարավոր վնասների հատուցման երաշխիքներից զրկված լինելու պայմաններում անհամաչափ սահմանափակման է ենթարկվում անձի սեփականության իրավունքը: Ուստի հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու փուլում ևս, ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի առանձնահատկություններով պայմանավորված, վերջինիս մասնագիտացված կառավարում իրականացնելու հարցը առավել քան արդիական է, իսկ նման անհրաժեշտություն առաջանալու դեպքում անհրաժեշտ է նախատեսել գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու ընթացակարգ:

Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկում ենք բոլոր դեպքերում, երբ իրավասու մարմինը Օրենքով նախատեսված կարգով կայացրել է ուսումնասիրության ընթացքը կասեցնելու որոշում, որի հիման վրա կասեցվել է հայցադիմում ներկայացնելու վեցամսյա ժամկետը, դատարանը իրավասու լինի որոշելու գույքի պահպանման և կառավարման հարցը, եթե ողջամտորեն հավանական է, որ նման միջոցներ չձեռնարկելը կարող է հանգեցնել գույքի արժեքի էական նվազման կամ գույքի վիճակի վատթարացման:

Ընդհանրացնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման ինստիտուցիոնալ և գործառութային առանձնահատկությունները՝ կարող ենք փաստել հետևյալը.

1. *Հայցի նախնական ապահովման միջոցները՝ որպես ապագայում հարուցվելիք հայցի ապահովման միջոցներ, քաղաքացիական դատավարությունում մինչդատական բնույթ ունեն և չեն նույնանում հայցի ապահովման հետ: Նման միջոցների*

կիրառումը ուղղված է հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու դիմում ներկայացրած անձի շահերի ապահովմանը և այն ռիսկերի կանխմանը, որոնք կարող են խոչընդոտել շահագրգիռ անձի կողմից իր պահանջի իրավունքի իրացումը:

2. *Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանցքային նշանակությունը պայմանավորված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության և դրա ծավալների բացահայտմանն ուղղված ուսումնասիրության շրջանակներում նման ակտիվների արգելադրման անհրաժեշտությամբ: Տվյալ վարույթում հայցի նախնական ապահովման միջոցները նախապես ձեռնարկված նյութահրավական ներգործության այնպիսի ժամանակավոր միջոցներ են, որոնք սահմանափակում են անձի կողմից իր փաստացի իրավազորության ներքո գտնվող գույքի տիրապետումը, օգտագործումն ու տնօրինումը և ապահովում են դատարան գույքի բռնագանձման պահանջ ներկայացնելը:*

3. *Հաշվի առնելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առանձնահատկությունները՝ առաջարկվել է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմում ներկայացվելու դեպքում նախնական ապահովման միջոցները ոչ թե իրավունքի ուժով գործեն որպես հայցի ապահովման միջոցներ, այլ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ քննարկի հայցի նախնական ապահովման միջոցը հայցի ապահովման միջոցով փոխարինելու հարցը՝ հաշվի առնելով նախնական ապահովման կիրառված միջոցների և հայցապահանջի համաչափությունը՝ անհրաժեշտության դեպքում ձևափոխելով այն:*

4. *Հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման տարբերակված նախապայմանները չպահպանելու դեպքում իրավասու մարմնի մոտ չի ծագում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման դիմում ներկայացնելու իրավունքը, ուստի առաջարկվում է, որ դատարանը, պարզելով, որ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառում պահանջելու՝ Օրենքով սահմանված իրավաչափության պայմանները պահպանված չեն, իրավասու լինի որոշում կայացնել դիմումը վերադարձնելու վերաբերյալ:*

5. *Հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու դիմումի քննության շրջանակներում դատարանը պարտավոր է իրավական գնահատական տալ ուսումնասիրության նախնական արդյունքներին այն ծավալով, որը իրատեսական է դարձնում տվյալ գույքը ապօրինի ծագում ունենալու հիմքով հետագայում այն բռնագանձելու համար: Բացի այդ, դատարանը պետք է քննարկի նախնական ապահովման միջոցներ չձեռնարկելու դեպքում գույքի օտարման կամ գույքի արժեքի էական փոփոխության հնարավորությունը՝ ուսումնասիրության արդյունավետ իրականացումը դժվարացնելու և այդ արդյունքների հիման վրա բռնագանձման պահանջ ներկայացումը ապահովելու տեսանկյունից:*

6. *Ըստ Օրենքի՝ պետության կողմից արգելադրված գույքի կառավարման և պահպանման հնարավորությունը նախատեսված է միայն հայցի ապահովում կիրառված լինելու փուլում, սակայն հաշվի առնելով հայցի նախնական ապահովման փուլում հակընդդեմ ապահովման և հնարավոր վնասների հատուցման երաշխիքների բացակայությունը, ինչպես նաև հայցադիմումի ներկայացման վեցամսյա ժամկետի կասեցման հնարավորությունը՝ առաջարկվել է հայցի նախնական ապահովման փուլում դատարանին լիազորել գույքի պահպանման և կառավարման հարցը որոշելու իրավունքով այն դեպքում, երբ ողջամտորեն հավանական է, որ նման միջոցների չձեռնարկումը կարող է հանգեցնել գույքի արժեքի էական նվազման կամ գույքի վիճակի վատթարացման:*

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ПРЕДВАРИТЕЛЬНЫХ ОБЕСПЕЧИТЕЛЬНЫХ МЕР В ПРОЦЕССЕ КОНФИСКАЦИИ ИМУЩЕСТВА НЕЗАКОННОГО ПРОИСХОЖДЕНИЯ

Мери Хачатрян
Аспирант кафедры гражданского процессуального права ЕГУ

Одной из эффективных гарантий конфискации активов незаконного происхождения является внедрение действенных механизмов по обнаружению и замораживанию таких активов. В отличие от гражданского судопроизводства процедура конфискации имущества незаконного происхождения состоит из определенных последовательных этапов, которые направлены на иследовании рассматриваемого имущества и при наличии предусмотренных законом условий его конфискацию. В статье рассматриваются особенности применения предварительных мер при конфискации имущества незаконного происхождения. В статье раскрывается и анализируется их связь с применением мер обеспечения иска. Представлены предпосылки, при наличии которых уполномоченный орган вправе обратиться с заявлением о применении предварительных мер. В статье представлен круг вопросов и ориентиров, которые должен определить суд в ходе рассмотрения заявления, тем самым определив необходимость и объем его применения. Учитывая, что активы могут быть заморожены на длительный срок, предложено внедрение механизмов управления и сохранения активов на этапе применения предварительных обеспечительных мер.

CHARACTERISTICS OF APPLICATION OF PRELIMINARY MEASURES IN THE PROCEDURE OF CONFISCATION OF PROPERTY OF ILLICIT ORIGIN

Meri Khachatryan
Ph.D. student at the Chair of Civil Procedure at YSU

One of the efficient guarantees for the seizure of assets of illicit origin is the implication of effective mechanisms for freezing and securing such assets. In contrast to civil litigation, the procedure of confiscation of property of illicit origin consists of certain successive phases, which are aimed at the examination of the property in question and if there are conditions prescribed by law, at its confiscation. The article discusses the peculiarities of the application of the means of preliminary measures in the confiscation of property of illicit origin. The paper reveals and analyzes its relation with the application of the means of securing the claim. The preconditions are met, in case of which the authorized body is entitled to take action for preliminary measures.The article presents range of issues and guidelines that the court should

determine during the examination of the application thereby determining the need and scope of its implication. Taking into consideration that the assets can be frozen for a lengthy period, the assets preservation and management mechanisms during the pre-trial security measures phase have been proposed.

Բանալի բառեր - *նախնական ապահովման միջոցներ, հայցի ապահովման միջոցներ, իրավասու մարմին, ապօրինի ակտիվների սառեցում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կարգ, հակընդդեմ ապահովում, համաչափության սկզբունք*

Ключевые слова: *предварительные обеспечительные меры, обеспечение иска, уполномоченный орган, замораживание незаконно полученных активов, порядок конфискации имущества незаконного происхождения, встречное обеспечение, принцип соразмерности.*

Key words: *preliminary measures, securing a claim, the authorized body, freezing of illegally obtained assets, procedure of confiscation of property of illicit origin, counter-security, principle of proportionality.*